## Արձանագրություն N 2

**ՀՀ առողջապահության նախարարության 2018 թվականի կարիքների համար անհրաժեշտ բաց մրցույթով Մեթադոն դեղի ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/11» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

«23» «Հունվարի» 2018թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ — Մ. Սևումյան

Հանձնաժողովի անդամներ — Մ.Հարությունյան, Ն.Թովմասյան

Հանձնաժողովի քարտուղար — Հ.Մնացականյան

### *1. Ընթացակարգի հայտերի բացման մասին*

---

***(Մ.Սևումյան)***

Ընդունել ի գիտություն, որ 07.12.17թ. հրապարակվել է հրավեր armeps համակարգում: Հայտերի բացումը՝ 16.01.18թ.:

Հայտ է ներկայացրել ներքոհիշյալ կազմակերպությունը.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության իրավաբանական և էլ. հասցեներ | Կազմակերպության ՀՎՀՀ-ն |
|---|---|---|---|
| 1 | «Արֆարմացիա» ՓԲԸ | Ք.Երևան, Րաֆֆու 111<br>Arpharm.erevan@yandex.ru | 02505735 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին*

---

***(Մ.Սևումյան)***

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին*

---

***(Մ.Սևումյան)***

Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *4. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*

---

**(Մ.Սնումյան)**

Հարցումներ չեն եղել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

## 5. Բանակցությունների վարման մասին

---

**(Մ.Սնումյան)**

«ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/11» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Արֆարմացիա» ՓԲԸ-ն 16.01.18թ. հրավիրվել է բանակցությունների՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը: Բանակցությունները տեղի են ունեցել 2018 թվականի հունվարի 23-ին ժամը 15:00-ին:

Բանակցություններին մասնակցում էր «Արֆարմացիա» ՓԲԸ-ի տնօրենը: Վերջինիս կողմից նոր գնային առաջարկ չներկայացվեց:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

## 6. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

---

**(Մ.Սնումյան)**

Կազմակերպության կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացվում է ստորև.

| Հ/Հ | Անվանումը | Նախահաշվային | | | «Արֆարմացիա» ՓԲԸ | | | Նախահաշվային |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | քանակ | Միավոր գին | Գումար | Գինը առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ով | Միավոր գին |
| 1 | Մեթադոն 5 մգ | 20 000 | 90 | 1 800 000 | 1 500 000 | 300 000 | 1 800 000 | 90 |
| 2 | Մեթադոն 10 մգ | 120 000 | 148,8 | 17 856 000 | 14 880 000 | 2 976 000 | 17 856 000 | 148,8 |
| 3 | Մեթադոն 40 մգ | 50 000 | 290 | 14 500 000 | 12 083 333,33 | 2 416 666,67 | 14 500 000 | 290 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:***

## 7. Առաջին տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու մասին

---

**(Մ.Սնումյան)**

«ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/11» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Արֆարմացիա» ՓԲԸ-ն՝ 1, 2, 3 չափաբաժինների մասով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**8.Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ իրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի N 502-Ն որոշման 2.1 և 2.2 ենթակետերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին**

---

***(Մ.Սևումյան)***

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի N 502-Ն որոշման 2.1 և 2.2 ենթակետերը՝ որոշվեց առաջարկել «Արֆարմացիա» ՓԲԸ-ին՝ ծանուցման պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**9. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման ներկայացման մասին**

---

***(Մ.Սևումյան)***

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ որոշվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/11» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Արֆարմացիա» ՓԲԸ-ին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս չլինելու և հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքին չգերազանցելու մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *10. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին*

---

**(Մ.Սևումյան)**

«ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/11» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------- Մ. Սևումյան

Անդամներ՝ ---------------------------- Մ. Հարությունյան

---------------------------- Ն. Թովմասյան

Քարտուղար՝ ---------------------------- Հ. Մնացականյան